

1920 Թ. ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹՈՒՐԿ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Բացահայտում է Ղարաբաղի հայության 1920 թ. մարտի
22-26-ի կոտորածների պատճառները*

Բանակի բառեր – Բաթում, Օսմանյան կայսրություն, Ադր-
բեջան, 1920 թ., ապրիլի 15-ի գաղտնի պայմանագիր, ցեղա-
սպանություն, քրդեր:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում հաշտություն կնքելով Հայաստանի
Հանրապետության հետ՝ Օսմանյան կայսրությունը աշխարհին ցույց էր տա-
լիս, թե իբր առաջինն է վավերացրել Արևելյան Հայաստանում հայկական
պետության գոյության փաստը, բայց իրականում պատրաստվում էր հաշե-
հարդար տեսնել նաև Անդրկովկասի հայության հետ:

Ուստի՝ չնայած այն հանգամանքին, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված
Մուդրոսի զինադադարով թուրքական զորքերը հեռանալու էին երկրամասի
սահմաններից, արդեն նույն թվականի նոյեմբերին Ադրբեջանի զինվորական
հրամանատարության և Կովկասում Իսլամական բանակի գլխավոր հրամա-
նատար Նուրի փաշայի միջև ստորագրվում է համաձայնություն, ըստ որի՝
օսմանյան սպաներն ու զինվորները իրավունք ունեին կամավոր կերպով
ծառայության մտնել ադրբեջանական բանակում: Դրան զուգահեռ՝ Թուր-
քիան Ադրբեջանի հետ միասին հետևողական քայլեր էր ձեռնարկում Հայաս-
տանի տարածքում առկա թաթարական սովոր բնակչությանը զինելու և
ապստամբության նախապատրաստելու համար: Այդպիսի վտանգավոր հա-
կապետական օջախներից էին Զանգիբասարը, Բեյուք-Վեդին, Սուրմալուն,
Բասարգեչարը, Ճղնի-Շերիերը (Դարալագյազ), Ղարախաչ-Ջղինը, Միլլի-
Դարասին, Աղբաբան, Զարիշատը: Ադրբեջանը նրանց մատակարարում էր
փող, իսկ Թուրքիան՝ զենք և մասնագետ սպաներ ու զինվորներ: Նշված
օջախների գործողությունները Երևանում Ադրբեջանի լիազոր-ներկայա-

*Այս ուշագրավ և խիստ **արդիական** հրապարակումը 2015 թ. մարտի 2-ին 89 տարեկան հասակում
կյանքից հեռացած պրոֆ. **Վլադիմիր Ն. Ղազախեցյանի** կողմից ժամանակին մեզ տրամադրված
նյութերից մեկն է, որը որոշ խմբագրումներով հանձնում ենք ընթերցողի դատին: Մինչև իր կյան-
քի վերջին օրերը արխիվային պրպտումներով զբաղված իսկական գիտնականի ու համեստ մտա-
վորականի հետաքրքիր հոդվածի տպագրումը «ՎԷՄ» հանդեսի նվերն է նրա ծննդյան 90-ամյակին:
Խմբ.: Ընդունվել է տպագրության 12.03.2015:

1 Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., 2010, էջ
32-36:

ցուցչության միջոցով համաձայնեցվում էին Ադրբեջանի և Թուրքիայի ռազմական ծրագրերի հետ: Ուստի երբ 1919 թ. սեպտեմբերին անգլիական զորքերը դուրս եկան Անդրկովկասից, Ադրբեջանի և Թուրքիայի հակահայ գործունեությունը վերաձեց Հայոց ցեղասպանության շարունակման փոխադարձ պարտավորությունների վրա հիմնվող միջպետական ընդհանուր քաղաքականության:

Ադրբեջանի հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև 1919 թ. հոկտեմբերի 29-ին կնքվում է «Պաշտպանողական-հարձակողական ռազմական դաշինք», որով Օսմանյան կայսրությունը ստանձնում էր Ադրբեջանի հանրապետության բանակի կազմակերպումը, նրա համար պատրաստում կադրեր՝ հրահանգիչներ, սպաներ ու զինվորներ: Օսմանյան կառավարությունը իր բանակում ընդունում էր Ադրբեջանի սպաներին՝ նրանց կատարելագործելու համար: Միաժամանակ Թուրքիան ադրբեջանական բանակին մատակարարելու էր հրացաններ, գնդացիներ և այլ զինատեսակներ:

1919 թ. հոկտեմբերի 29-ի թուրք-ադրբեջանական պայմանագիրը ժամանակին բացահայտվել և տպագրվել է Երևանի «Յառաջ» թերթում՝ 1920 թ. ապրիլի 3-ին: Սույն պայմանագիրը, գրել է թերթը, ցույց է տալիս, որ հոկտեմբերից սկսած՝ Պոլիսն ու Բաքուն միմյանց հետ կապված են ոչ միայն «կրոնական ու ցեղային զգացումներով», ինչպես մինչև այդ պնդում էին, այլև ռազմական դաշինքով:

Դա էր պատճառը, որ երբ 1919 թ. վերջերին և մանավանդ՝ 1920-ի առաջին ամիսներին ադրբեջանական զորքերը հարձակումներ էին գործում Ղարաբաղի ու Զանգեզուրի վրա, թուրք սպաներն ու ասկյարները, թաթար խուժանի հետ միասին, հայկական ուժերին թիկունքից հարվածներ էին հասցնում Օրդուբադի, Դարալագյազի, Բոյուք-Վեդիի ու Զարիշատի շրջաններում: Նույն իրողությունը արձանագրել է նաև անգլիական «Թայմզ» թերթը: «Թաթար հանրապետությունը, գրել է նա, հենց սկզբից հովանավորվում էր երիտասարդ թուրքերի կողմից, որոնք այդ հանրապետությունը նկատում էին իբրև միջոց Թուրքեստանի հետ հաղորդակցության մեջ մտնելու և Կասպից ծովի վրա հենարան ունենալու համար»²:

Սակայն եթե պատերազմում պարտություն կրած Օսմանյան կայսրության հետ կնքված 1919 թ. հոկտեմբերի 29-ի պայմանագրում Հայաստանի դեմ ուղղված նկրտումները քողարկված բնույթ ունեին, ապա քենալականների քաղաքական ասպարեզ իջնելուց հետո դրանք դարձան ավելի բացահայտ: 1920 թ. ապրիլի 15-ին նույն Ադրբեջանը քենալական Թուրքիայի հետ կնքեց գաղտնի պայմանագիր, ինչը վկայում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը Հայաստանի և հայ ժողովրդի դեմ պայքարում միաժամանակ համագործակցում և դաշնային կապերի մեջ էր գտնվում և՛ օսմանյան, և՛ քենալական իշխանությունների հետ:

Այս պայմանագիրը ժամանակին ձեռք է բերվել հայկական բանակի հետախուզության կողմից և տպագրվել «Զորքերի հրամանատարության շտաբի հետախուզական բաժանմունքի 1920 թվականի հուլիսի 6-ի № 20 Անփոփագրում»³: Սակայն տպագրվել է պայմանագրի ոչ ամբողջական

2 Մեջբերումը ըստ՝ «Յառաջ», Եր., 22 ապրիլի 1920, N 81:

3 «Сводка Разведывательного отд. Штаба Командующего войсками N 20 к 6 июля 1920 года. Карта 5 верст в дюйме». ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 40-43:

շարադրանքը, այլ միայն, պետք է ենթադրել, ամենաէական հատվածը, որը և ստորև բերում ենք ամբողջությամբ, ելնելով փաստաթղթի կարևորությունից:

«Սույն թվականի ապրիլի 15-ին Թուրքիայի և Ադրբեջանի միջև ստորագրվել է նոր գաղտնի կոնվենցիա՝ ի փոփոխումն անցյալ տարվա նոյեմբերին ստորագրված պայմանագրի: Այդ կոնվենցիայի ամենահետաքրքիր կետերից են.

«Հոդ. 5. Հանրապետական կառավարությունը (Ադրբեջանի – Վ. Ղ.) խոստանում է շարունակել օգնությունը հասնելու համար ռազմական մերձեցմանը խորհրդային կառավարության (Ռուսաստանի – Վ. Ղ.) և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» (քենալական Թուրքիա – Վ. Ղ.) միջև: Անհրաժեշտության դեպքում նա ինքը (Ադրբեջանը – Վ. Ղ.) կմտնի այդ մերձեցման (Միության) մեջ:

Հոդ. 6. «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեն» մեկ ներկայացուցիչ կունենա Ադրբեջանի Հանրապետության կառավարությանը կից: Այդ ներկայացուցիչը օժտված կլինի բոլոր լիազորություններով՝ գործերը վարելու և լուծելու համար պայմանավորվող կողմերի միջև գոյություն ունեցող բոլոր ռազմական, ֆինանսական ու այլ բնույթի հարցերը:

Հոդ. 7. «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» ներկայացուցչությունը կտրականապես խոստանում է, որ Ադրբեջանի վրա Հայաստանի հարձակման դեպքում, և Ադրբեջանը կտրականապես խոստանում է, որ արևելյան մարզերը Հայաստանին տրվելու ու միացվելու դեպքում երկու պայմանագրվող կողմերը կօգնեն միմյանց որպես մեկ միացյալ բանակ:

Հոդ. 16. Խաղաղության վեհաժողովի կողմից Թուրքիայի արևելյան մարզերը Հայաստանին զիջելու դեպքում գործի կդրվեն այն որոշումները, որպիսիք հավանության կարժանանան պատվիրակների կողմից և կվերաբերվեն ներկայացուցչության ընդունած միջոցառումներին:

ա) Ադրբեջանի տարածքում ապրող քրդական ցեղերի միջոցով և այդ ցեղերի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ հասնել Ադրբեջանի մաքրագործման ավարտի շուրջ կատարյալ համաձայնության:

Հանրապետական կառավարությունը համաձայնում է թույլատրել հանգրվաններ կազմակերպել Ադրբեջանի տարածքում՝ դյուրացնելու մաքրագործման նպատակով Նուրի փաշայի ուժերի ազատ գործողությունները և համագործակցությունը: Նրանց մասնակցությունը մաքրագործմանը (ջարդերին) որոշված է: (Զինվորական մինիստրության հրամանի «16-ը պարզաբանել սպաներին ու զինվորներին»)⁴:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության քաղաքականությունը, որ ծրագրել և իրականացրել էր Օսմանյան կայսրությունը արևմտահայության հանդեպ, յուրացվել էր մուսավաթական Ադրբեջանի կողմից և գործի դրվել Անդրկովկասի հայ բնակչության նկատմամբ: Այդ համատեղ նպատակադրումն իր ձևակերպումը գտավ նաև 1919 թ. հոկտեմբերի 29-ի Օսմանյան կայսրություն-

4 ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 33, թ. 40-43:

Աղբրեջան գաղտնի պայմանագրում:

Մուսավաթական Աղբրեջանի համագործակցությունը շարունակվեց նաև քեմալական Թուրքիայի հետ, հենց որ վերջինս իջավ պատմության ասպարեզ, և իր արտահայտությունը գտավ 1920 թ. ապրիլի 15-ի պայմանագրում: Նրանում ներառվել էին 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ տեղ գտած հայերի բնաջնջման կոնկրետ մեթոդներն ու եղանակները՝ տեղահանությունը, որը հասկացվում էր նաև որպես «ջարդեր», հանգրվանների կազմակերպումը, քրդերին օգտագործելը և այլն:

Պայմանագրում գոհունակությամբ արձանագրվում էր այն փաստը, որ Աղբրեջանը հայերից «մաքրագործելու» գործընթացն արդեն սկսվել է, և որ այսուհետ ևս այն շարունակվելու է քրդական ցեղերի մասնակցությամբ, ինչն իրականացնելու համար գոյություն ունի նրանց հետ կնքված պայմանագիր: Սրանով հասկանալի է դառնում, որ քրդերի ակտիվ մասնակցությունը 1920 թ. մարտի 22-26-ին տեղի ունեցած Շուշիի և Ղարաբաղի այլ բնակավայրերի հայության կոտորածների իրականացմանը եղել է ոչ թե սովորական սադրանքների, այլ նախապես ստորագրված ցեղասպանական պայմանագրի գործադրման արդյունքը:

Այսպիսով՝ 1920 թ. ապրիլի 15-ի պայմանագիրը լիովին հերքում է Հայոց ցեղասպանության իրականացման մեջ իրենց մասնակցությունը ժխտելու համար քեմալական Թուրքիայի ղեկավարների հետագայում ձեռնարկած շինծու փորձերը: Ավելին, փաստաթուղթն ապացուցում էր, որ դրանից ընդամենը 13 օր անց՝ ապրիլի 28-ին տեղի ունեցած Աղբրեջանի խորհրդայնացումը Սան-Ռեմոյի կոնֆերանսից (ապրիլի 19-26) հետո անխուսափելի դարձող Սևրի պայմանագիրն ընդունելու պահանջի առջև դրված Թուրքիային հյուսիսից «շնչառություն» ապահովելու նպատակն էր հետապնդում:

Վլադիմիր Ն. Ղազախեցյան
Պաշտ. գիր. դոկտոր

TURKISH-AZERBAIJANI AGREEMENT OF APRIL 15, 1920

Discloses the reasons of the massacre of Armenians of Karabakh
on March 22-26, 1920

Vladimir N. Ghazakhetsyan

Keywords – Batumi, the Ottoman Empire, Azerbaijan, 1920, secret agreement on April 15, genocide, Kurds.

ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКОЕ СОГЛАШЕНИЕ 15-ГО АПРЕЛЯ 1920 ГОДА

Раскрывает причины резни армян Карабаха 22-26 марта
1920 года

Владимир Н. Казахецян

Ключевые слова – Батуми, Османская империя, Азербайджан, 1920 год, секретное соглашение 15-го апреля, геноцид, курды.